ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3610-Ա « 03 » սեպտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի
Հ.1305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Աստղիկ Բաղալյանի լ/ա Անի Հակոբյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 10-ի հ.1305-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով հողի սեփականության իրավունքի պետական հ.Ա014046 ակտը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-82976-25 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 10-ի «Հաղթանակ թիվ 118-23 և 118-23ա հասցեների հողամասերի սահմանների ճշտման և հատակագիծ հաստատելու մասին» հ.1305-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ «Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ թիվ 118-23ա հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 3199.4քմ՝ ակտում ամրագրված 3200.0քմ մակերեսի փոխարեն, իսկ Հաղթանակ թիվ 118-23 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ և ակտով կազմում է 2400.0քմ»:

2) Որոշման 1-ին կետում «3199.24քմ» բառը փոխարինել «2400քմ» բառով, իսկ «2400քմ» բառը՝ «3199.24քմ» բառով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ